

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



*«ՄԱԿ ԿՓՇԿ ներքո Հայաստանի երկամյա առաջընթացի երրորդ զեկույց»
ՄԱԶԾ-ԳԷՖ/0112638 ծրագիր*

Փարիզի համաձայնագրի թափանցիկության շրջանակի ներքո Երկամյա թափանցիկության զեկույցի մաս կազմող ազգային գույքագրման հաշվետվությունների պահանջները

*Մարինա Սարգսյան
Ծրագրի առաջադրանքի ղեկավար*

27 Հունվարի 2022թ.

Աշխատաժողովի նպատակը

- Ներկայացնել Փարիզի համաձայնագրով թափանցիկության ընդլայնված շրջանակը
- Ծանոթացնել ԶԳ ազգային կադաստրի հաշվետվությունների մշակման պահանջներին՝ ըստ Փարիզի համաձայնագրի թափանցիկության ընդլայնված շրջանակի
- Ծանոթացնել Կլիմայի փոփոխության միջկառավարական խորհրդի (ԿՓՄԽ/IPCC) 2006 IPCC ուղեցույցներին
- Ներկայացնել «Էներգետիկա» սեկտորի ջերմոցային գազերի արտանետումների գնահատման հիմնական մոտեցումները, երկրի փորձը, առկա բացերը և հետագա բարելավման ուղղությունները
- Աջակցել ջերմոցային գազերի գույքագրման կառավարման ազգային համակարգի ստեղծմանը

ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի ներքո թափանցիկության շրջանակները

- Կոնվենցիայի նպատակին հասնելու համար Կողմերին անհրաժեշտ է հուսալի, թափանցիկ և համապարփակ տեղեկատվություն ջերմոցային գազերի արտանետումների, կլիմայական գործողությունների և աջակցության վերաբերյալ:
- Ազգային հաղորդագրությունների ներկայացման պահանջն ամրագրված է Կոնվենցիայի Հոդված 4.1ա և 4.1բ և Հոդված 12.1 կետերում, երկամյա առաջընթացի զեկույցի ներկայացման պահանջը ամրագրված է Կողմերի Կոնֆերանսի (CP) համապատասխան որոշումներով՝ 1/CP.16 և 2/CP.17:
- Ազգային հաղորդագրությունները, Երկամյա առաջընթացի զեկույցները և ԶԳ ազգային կադաստրը, այն հիմնական գործիքներն են, որոնց միջոցով տրամադրվում է տեղեկատվություն ԿՓՇԿ նպատակին հասնելու երկրի առաջընթացի, ինչպես նաև այդ առաջընթացը իրագործելու երկրի կարիքների և մարտահրավերների մասին:


Փարիզի համաձայնագիր

Կլիմայի փոփոխության վերաբերյալ առաջին համընդհանուր, իրավաբանորեն պարտադիր գլոբալ համաձայնագիրն է, որն ընդունվել է կոնվենցիայի 21-րդ համաժողովում (COP21), 2015 թ. դեկտեմբերին:

Ուժի մեջ է մտել 2016թ.

196 Կողմ Երկիր (ներառյալ ԵՄ)


*Հայաստանի Հանրապետությունը
վավերացրել է 2017թ. փետրվարի 8-ին*



Փարիզի համաձայնագրի թափանցիկության ընդլայնված շրջանակը

- Թափանցիկության ընդլայնված շրջանակը առանցքային է Փարիզի համաձայնագրի գործարկման համար: Թափանցիկության կանոնակարգի մշակումը զրոյից չի սկսվել՝ Կոնվենցիայով նախատեսված թափանցիկության շրջանակները, ներառյալ ազգային հաղորդագրությունները, երկամյա առաջընթացի զեկույցները, ինչպես նաև միջազգային խորհրդատվությունն ու վերլուծությունը հիմք են հանդիսացել Փարիզի համաձայնագրի 13-րդ հոդվածով նախատեսված ուղեցույցների և ընթացակարգերի մշակման համար:
- Ի տարբերություն ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ի նախորդ պայմանավորվածությունների, Փարիզի համաձայնագիրը նախատեսում էր ստեղծել ուղեցույցների ընդհանուր փաթեթ բոլոր երկրների համար՝ միաժամանակ ճկունություն ապահովելով զարգացող երկրների համար, որոնք դրա կարիքն ունեն:

Փարիզի համաձայնագրի թափանցիկության ընդլայնված շրջանակը՝ Հոդված 13



Թափանցիկության ընդլայնված շրջանակի ուղղորդող սկզբունքները

18/CMA1 որոշմամբ ընդունվել են ընթացակարգեր և ուղեցույցներ (MPG)՝ **կիրառելի են բոլոր Կողմերի համար.**

- Ժամանակի ընթացքում բարելավված հաշվետվությունների և թափանցիկության ապահովում
- Թափանցիկության, ճշգրտության, ամբողջականության, հետևողականության և համեմատելիության խթանում (TACCC)
- Ապահովել, որ Կողմերը պահեն հաշվետվությունների ներկայացման հաճախականությունը և որակը
- Կողմերը պարտավոր են ներկայացնել իրենց առաջին երկամյա թափանցիկության զեկույցը (BTR1) և գույքագրման ազգային զեկույցը ամենաուշը **մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը:**
- **Աջակցություն կտրամադրվի զարգացող Կողմերին՝** Փարիզի համաձայնագրի 13-րդ հոդվածի իրականացման և զարգացող Կողմերի թափանցիկության հետ կապված կարողությունների շարունակական զարգացման համար:

Տեխնիկական փորձաքննություն և առաջընթացի բազմակողմ դիտարկում

- Յուրաքանչյուր Կողմի ներկայացրած տեղեկատվությունը **պետք է** անցնի տեխնիկական փորձաքննություն, որին ենթակա են.
 - ջերմոցային գազերի ազգային կադաստրի հաշվետվությունը,
 - NDC-ի իրականացման և թիրախներին հասնելու առաջընթացին հետևելու մասին տեղեկատվությունը:
- Տեխնիկական փորձաքննության նպատակն է նաև բացահայտել բարելավման ուղղությունները և ներկայացված տեղեկատվության համապատասխանությունը ձևերին, ընթացակարգերին և ուղեցույցներին:
- Յուրաքանչյուր Կողմ **պետք է** մասնակցի առաջընթացի բազմակողմ քննարկմանը՝ կապված ստացված/տրամադրված աջակցության և իր NDC-ի իրականացման և թիրախներին հասնելու առաջընթացին:

Թափանցիկության շրջանակների համեմատություն

ՄԱԿ-ի ԿՓՇԿ նեթո գոյություն ունեցող թափանցիկության շրջանակները	Փարիզի համաձայնագրի թափանցիկության ընդլայնված շրջանակը
Զարգացած և զարգացող երկրների համար տարբեր պահանջներ	Երկրներն ունեն ուղեցույցների և գործընթացների ընդհանուր փաթեթ: Ճկունությունը տրամադրվում է այն զարգացող երկրների համար, որոնք դրա կարիքն ունեն՝ հաշվի առնելով իրենց կարողությունները, սակայն այդ ճկունությունը սահմանափակված է ուղեցույցների հատուկ դրույթներով:
Տարբեր հաշվետվայնության գործիքներ՝ երկամյա հաշվետվություններ զարգացած երկրների համար և երկամյա առաջընթացի զեկույցներ զարգացող երկրների համար	Բոլոր երկրները կներկայացնեն երկամյա թափանցիկության զեկույց: Թափանցիկության երկամյա զեկույցի շրջանակը նման է նախորդ զեկույցներին, սակայն ընդլայնվել է՝ ներառելով կամավոր տեղեկատվություն կլիմայի փոփոխության ազդեցության և հարմարվողականության (ներառյալ կորուստների և վնասների) վերաբերյալ և կենտրոնանալով NDC-ներին հասնելու համար առաջընթացին հետևելու վրա:
Տարբեր փորձագիտական վերանայման գործընթացներ	Բոլոր երկրները ենթակա են միևնույն տեխնիկական փորձագիտական վերանայմանը և առաջընթացին նպաստող բազմակողմ դիտարկմանը: Առաջընթացի քննարկումն այժմ կունենա առցանց բաղադրիչ:
Պլանավորման բարելավումների գործընթաց չկա	Երկրները պետք է պատրաստեն բարելավման ծրագիր, թե ինչպես են նրանք մտադիր բարելավել իրենց հաշվետվությունները ժամանակի ընթացքում:

Թափանցիկության շրջանակների համեմատություն

Երկամյա թափանցիկության զեկույց

Ջերմոցային գազերի ազգային կադաստրի հաշվետվություն

Ազգային մակարդակով սահմանված ներդրումների իրագործման առաջընթաց

Կլիմայի փոփոխության ազդեցություն և հարմարվողականություն (ըստ պատշաճի)

Ստացված և պահանջվող աջակցություն

Ազգային հաղորդագրություն

ԶԳ ազգային կադաստր

Հարմարվողականությանը աջակցող ծրագրեր

Մեղմման միջոցառումների ծրագրեր

Տեխնոլոգիաների փոխանցում

Հետազոտություններ և դիտարկումներ

Կրթություն, հանրային իրազեկում

Կարողությունների հզորացում

Տեղեկատվություն, ցանցային աշխատանք

Բացեր, կարիքներ

Երկամյա առաջընթացի զեկույց

Ջերմոցային գազերի ազգային կադաստրի հաշվետվություն

Մեղմման միջոցառումներ և դրանց ազդեցությունը


Ֆինանսական, տեխնոլոգիական և կարողությունների զարգացման կարիքներ

Ջերմոցային գազերի ազգային կադաստրի հաշվետվություն

Ջերմոցային գազերի գույքագրման սկզբունքները

- Ջերմոցային գազերի գույքագրման սկզբունքները **պետք է** համապատասխանեն Կլիմայի փոփոխության միջկառավարական խորհրդի (IPCC) 2006 IPCC ուղեցույցների հատոր 1, գլուխ 1, բաժին 1.4՝ **TACCC** սկզբունքներին (թափանցիկության, ճշգրտության, ամբողջականության, հետևողականության և համեմատելիության):
 - IPCC 2006 թ. ՋԳ ազգային կադաստրի ուղեցույցը մշակվել է ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի (ԿՓՇԿ) պատվերով՝ թարմացնելու 1996 թ. ՋԳ ազգային կադաստրի ուղեցույցը և տրամադրելու ջերմոցային գազերի արտանետումների գնահատման միջազգայնորեն համաձայնեցված մեթոդաբանություններ՝ Կոնվենցիային զեկուցելու համար:
- Ջերմոցային գազերի ազգային կադաստրի հաշվետվության հանդեպ պահանջները ներկայումս դառնում են ընդհանուր բոլոր Կողմերի համար՝ չեն տարբերակվում զարգացող և զարգացած երկրների համար:

Երկամյա
թափանցիկության
զեկույցների (BTR)
մաս կազմող
ազգային
գույքագրման
հաշվետվությունների
պահանջները



Սեկտորներ և գազեր (1)

Յուրաքանչյուր Կողմ պետք է զեկուցի յոթ գազի մասին.

- ածխածնի երկօքսիդ (CO_2)
- մեթան (CH_4)
- ազոտի օքսիդ (N_2O)
- հիդրոֆտորածխածնիկներ (HFCs)
- պերֆտորածխածիններ (PFCs)՝ *բացակայում են Հայաստանում*
- ծծմբի հեքսաֆտորիդ (SF_6)
- ազոտի տրիֆտորիդ (NF_3)՝ *բացակայում են Հայաստանում*

Գլոբալ տաքացման ներուժ

- Ջերմոցային գազերի արտանետումները CO₂ համարժեքով (CO₂ համ.) արտահայտելու համար յուրաքանչյուր Կողմ **պետք է** կիրառի ԿՓՄԽ-ի Գնահատման հինգերորդ հաշվետվությունում առաջարկված Գլոբալ տաքացման ներուժի (GWP) արժեքները 100-ամյա հորիզոնի համար
 - ներկայումս զարգացած երկրները կիրառում են Գնահատման չորրորդ հաշվետվությունում առաջարկված Գլոբալ տաքացման ներուժի (GWP) արժեքները 100-ամյա հորիզոնի համար, իսկ զարգացող երկրները՝ երկրորդ

ՁԳ	Գլոբալ տաքացման ներուժ	
	Գնահատման երկրորդ հաշվետվություն	Գնահատման հինգերորդ հաշվետվություն
CO ₂	1	1
CH ₄	21	28
N ₂ O	310	265
HFC-32	650	677
HFC-125	2800	3170
HFC-134a	1300	1300
HFC-152a	140	138
HFC-143a	3800	4800
HFC-227ea	2900	3350
SF ₆	23900	23500

Սեկտորներ և գազեր (2)

- Յուրաքանչյուր Կողմ պետք է հաշվետվություն ներկայացնի պրեկուրսորների մասին.
 - ազոտի օքսիդների (NO_x),
 - ոչ մեթանային ցնդող օրգանական միացություններ (NMVOC),
 - ածխածնի օքսիդ (CO)
 - ծծմբի երկօքսիդ (SO₂),

որոնց արտանետումների գնահատման մանրամասն մեթոդոլոգիաները ներկայացված են EMEP/CORINAIR արտանետումների գույքագրման ուղեցույցում:

Այդ արտանետումները չեն ներառվում երկրի ընդհանուր արտանետումների մեջ:

- Յուրաքանչյուր Կողմ պետք է զեկուլցի միջազգային ավիացիոն և ծովային բունկերային վառելիքի արտանետումների մասին՝ որպես երկու առանձին գրառում և ***այդ արտանետումները չպետք է ներառվեն երկրի ընդհանուր արտանետումների մեջ:***

Սեկտորներ և գազեր (3)

Յուրաքանչյուր Կողմ **պետք է** հաշվետվություն ներկայացնի հետևյալ սեկտորների վերաբերյալ՝ ըստ ԿՓՓՄԽ 2006թ. Ուղեցույցի.

- «Էներգետիկա»
- «Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում» (ԱՊԱՕ)
- «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում» (ԳԱՏԱՀ)
- «Թափոններ»

Կադաստրի մշակման գործընթացի համառոտագիր



Իրականացված հաշվարկման մեթոդների վերանայում և դրանցում հնարավոր փոփոխությունների իրականացում:
 Մեթոդաբանության ընտրությունը կախված է լրացուցիչ գործունեության տվյալների առկայությունից՝ ավելի բարձր կարգի մեթոդաբանության կիրառման համար:

- Պահանջների սահմանում. տվյալների աղբյուրների վերանայում և ընտրություն
- Հրապարակայնորեն հասանելի ազգային տվյալների օգտագործում.
- Մնացած տվյալների հավաքագրում ՇՄ նախարարության կողմից
- Տվյալների ստացում
- Որակի ապահովում և որակի ստուգում
- Արխիվացում

- Ազգային գործակիցների թարմացում և նոր ազգային գործակիցների մշակում (ըստ պատշաճի)
- Արտանետումների գնահատումների որակի կառավարում
- Որակի ստուգում

- Արտանետումների տվյալների համախմբում
- Սեկտորային հաշվետվությունների համախմբում
- Հաշվետվության նախագծի ՈՍ/ՈԱ
- Հաշվետվության նախագծի վերանայում և հաստատում Միջգերատեսչական համակարգման խորհրդի կողմից
- Ներկայացում ՄԱԿ ԿՓՇԿ-ին
- Արխիվացում

Ազգային պայմաններ և ինստիտուցիոնալ պայմանավորվածություններ

Յուրաքանչյուր Կողմ **պետք է**.

- ապահովի և պահպանի ջերմոցային գազերի ազգային կադաստրի մշակման ազգային՝ ներառյալ ինստիտուցիոնալ, իրավական և ընթացակարգային պայմանավորվածությունները, ազգային կադաստրերի հաշվետվությունների շարունակական գնահատման, կազմման և ժամանակին հաշվետվությունները ներկայացնելու համար:

Ազգային պայմաններ և ինստիտուցիոնալ պայմանավորվածություններ (2)

- զեկուցի գույքագրման պլանավորման, նախապատրաստման և կառավարման հետ կապված հետևյալ գործառույթների մասին.
 - **ՋԳ ազգային կադաստրի մշակման և ներկայացման համար պատասխանատու ազգային մարմնի մասին**
 - **գույքագրման մշակման գործընթացի, ներառյալ գույքագրման նախապատրաստմանը մասնակցող հաստատությունների հատուկ պարտականությունների մասին**
 - **ազգային կադաստրին վերաբերող ամբողջ տեղեկատվությունը արխիվացման մասին**
- ներկայացնի գույքագրման պաշտոնական քննարկման և հաստատման գործընթացները:

Մեթոդներ

Մեթոդաբանություններ, պարամետրեր և տվյալներ

Յուրաքանչյուր Կողմ

- **պետք է** օգտագործի 2006 թ. IPCC ուղեցույցները և Կողմերի համաժողովի կողմից համաձայնեցված IPCC ուղեցույցների ցանկացած հաջորդ տարբերակ կամ ճշգրտում:
- **կիրառում է 2006 թ. IPCC ուղեցույցների մեթոդներ** և կարող է օգտագործել ազգային համապատասխան մեթոդաբանություններ, եթե դրանք ավելի լավ են արտացոլում իր ազգային պայմանները և համապատասխանում են IPCC-ի ուղեցույցներին: Այս դեպքերում յուրաքանչյուր Կողմ թափանցիկորեն բացատրում է ընտրված ազգային մեթոդները, տվյալները և/կամ պարամետրերը:
- **խրախուսվում է** հնարավորության դեպքում օգտագործել երկրին բնորոշ գործակիցներ և գործունեության տվյալներ:

Արտանետումների հիմնական աղբյուրները

- Հիմնական աղբյուրները արտանետումների կամ կլանումների այն կատեգորիաներն են, որոնց պետք է առանձնահատուկ ուշադրություն տրվի ազգային կադաստրի կառավարման համակարգում և կազմման գործընթացում, քանի որ դրանք էական ազդեցություն ունեն երկրի ՋԳ արտանետումների բացարձակ արժեքների կամ միտումների վրա:
- Յուրաքանչյուր Կողմ **պետք է** նշի մեկնարկային և վերջին հաշվետու տարվա հիմնական կատեգորիաները՝ կիրառելով հիմնական կատեգորիաների ԿՓՓՄԽ ուղեցույցներին համապատասխան վերլուծություն:
- 2017թ. Ջեմոցային գազերի ազգային կադաստրի հաշվետվությունում 19 հիմնական աղբյուրներից 12-ը գնահատվել են բարձր (2-րդ և 3-րդ) կարգի մեթոդաբանությամբ

Ժամանակային շարքերի համադրելիություն և վերահաշվարկներ

- Ժամանակային շարքերի համադրելիությունն ապահովելու համար պետք է օգտագործվեն նույն մեթոդներն ու հետևողական մոտեցումը գործունեության տվյալների և արտանետումների գործակիցների վերաբերյալ յուրաքանչյուր հաշվետու տարվա համար:
- Մեթոդների կամ ենթադրությունների փոփոխության դեպքում ժամանակային շարքերի պետք է վերահաշվարկեն՝ համաձայն IPCC-ի ուղեցույցների, ապահովելով, որ արտանետումների միտումների փոփոխությունները չեն պայմանավորված ժամանակային շարքերի մեթոդների կամ ենթադրությունների փոփոխությամբ:

Անորոշությունների գնահատում

- Յուրաքանչյուր Կողմ պետք է քանակապես գնահատի և որակապես քննարկի արտանետումների և կլանումների բոլոր աղբյուրների անորոշությունը, ներառյալ ընդհանուր արտանետումների անորոշությունը՝ առնվազն սկզբնական տարվա և ժամանակային շարքերի վերջին հաշվետու տարվա համար:
- Յուրաքանչյուր Կողմ նաև պետք է գնահատի արտանետումների և արտանետումների գնահատումների միտումների անորոշությունը՝ օգտագործելով առնվազն 1 մոտեցումը, ինչպես նշված է IPCC-ի ուղեցույցներում:

Լրիվության գնահատում


- Յուրաքանչյուր Կողմ պետք է նշի այն աղբյուրները, որոնք հաշվի չեն առնված ազգային գույքագրման հաշվետվությունում, բայց որոնց գնահատման մեթոդները ներառված են IPCC ուղեցույցներում և բացատրի նման բացառման պատճառները:
- Այդ նպատակով օգտագործվում են նշագրման բանալիներ (Notation Keys), երբ թվային տվյալները հասանելի չեն հաշվետվությունների ընդհանուր աղյուսակները լրացնելիս՝ նշելով այն պատճառները, թե ինչու այդ տվյալները չեն հաղորդվում որոշակի ոլորտների, կատեգորիաների և ենթակատեգորիաների կամ գազերի համար.

ԿՁ (NA)	Կիրառելի չէ՝ գործունեությունը կամ կատեգորիան առկա է, սակայն տվյալ տիպի արտանետումներ չեն առաջանում
ՉԳ (NE)	Չի գնահատված՝ արտանետումները/կլանումները գոյություն ունեն, բայց չեն գնահատվել
ՉԸ (NO)	Չի հանդիպում՝ տվյալ գործունեությունը կամ պրոցեսը երկրում գոյություն չունի


Որակի ստուգում/Որակի ապահովում

- Յուրաքանչյուր Կողմ պետք է մշակի գույքագրման որակի ստուգման/որակի ապահովման (ՈՍ/ՈԱ) պլան՝ IPCC-ի ուղեցույցներին համապատասխան, ներառյալ տեղեկատվություն ՈՍ/ՈԱ իրականացման համար պատասխանատու գործակալության վերաբերյալ և ներկայացնի տեղեկատվություն Որակի ստուգման իրականացված գործընթացի մասին
- Բացի այդ, Կողմերը պետք է կիրառեն հիմնական կատեգորիաների համար հատուկ ՈՍ ընթացակարգեր՝ համաձայն IPCC-ի ուղեցույցների, և այն կատեգորիաների համար, որոնցում զգալի մեթոդաբանական փոփոխություններ և/կամ տվյալների վերանայումներ են տեղի ունեցել:

ԶԳ Կադաստրի հիմնական արդյունքները, 2017թ.




Արտանետումների գերակշիռ մասը՝ 66.7%-ը, առաջանում է «Էներգետիկա» սեկտորից: Արտանետումների ծավալով հաջորդը «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում» սեկտորն է՝ 18.5%, որին հաջորդում են «Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում» և «Թափոններ» սեկտորները՝ 8.9% և 5.8%, համապատասխանաբար:



Հայաստանում ջերմոցային գազերից ամենաէականը ածխածնի երկօքսիդն է (CO₂)՝ մոտ 53%, որին հաջորդում է մեթանը՝ 30.6%, ազոտի ենթօքսիդի և ֆտորաածխածինների մասնաբաժինը շատ ավելի փոքր է՝ 9.9% և 6.5%, համապատասխանաբար, իսկ SF₆ մասնաբաժինը չնչին է:

Ժամանակային շարքեր

- Յուրաքանչյուր Կողմ **պետք է** զեկուցի ՋԳ տարեկան արտանետումների համադրելի ժամանակային շարքերը՝ սկսած 1990 թ.
- Յուրաքանչյուր Կողմի համար վերջին հաշվետու տարին **պետք է** լինի ոչ ավելի, քան երկու տարի՝ իր ազգային կադաստրի հաշվետվությունը ներկայացնելուց առաջ:



Տարբեր սեկտորներից արտանետումների մասնաբաժինների հարաբերակցությունը կայուն է, իսկ «Էներգետիկա» սեկտորից առաջացող արտանետումները շարունակաբար պահպանել են բացարձակ գերակշռությունը:

Ընդհանուր առմամբ, 1990թ. համեմատությամբ ՋԳ արտանետումները նվազել են մոտ 59%-ով՝ հիմնականում պայմանավորված «Էներգետիկա» սեկտորից արտանետումների կրճատումով:

2017թ. Ազգային կադաստրի բարելավումները

- ԶԳ կադաստրի բարելավումներն իրականացվել են «Հայաստանի երկամյա առաջընթացի երրորդ զեկույցի» (BUR 3) ՄԱԶԾ-ԳԷՀ ծրագրի շրջանակներում՝ ազգային կադաստրը ավելի թափանցիկ, ճշգրտ, ամբողջական, համադրելի, համեմատելի դարձնելու (TACCC սկզբունքներ) նպատակով, հաշվի առնելով.
 - Հայաստանի երկամյա առաջընթացի երկրորդ զեկույցի տեխնիկական վերլուծությունն իրականացնող տեխնիկական փորձագետների խմբի առաջարկությունները՝ ներկայացված տեխնիկական վերլուծության ամփոփ զեկույցում
 - ՄԱԿ ԿՓՇԿ-ի քարտուղարության կողմից կազմակերպված «Զերմոցային գազերի ազգային կադաստրի կառավարման համակարգի և ԶԳ ազգային կադաստրների որակի ապահովման» սեմինարի (2019) առաջարկությունները
 - Նախորդ Ազգային կադաստրի հաշվետվությունում նախատեսված բարելավումները

2017թ. Ազգային կադաստրի բարելավումները (2)

- Առաջին անգամ գնահատվել են ծծմբի հեքսաֆտորիդի՝ SF₆-ի արտանետումները
- ԶԳ արտանետումները գնահատվել են 6 նոր ենթակատեգորիաների համար
- 5 ենթակատեգորիաների համար կիրառվել է ավելի բարձր կարգի մեթոդաբանություն
- Հիմնական աղբյուրների վերլուծությունն իրականացվել է ինչպես մակարդակային, այնպես էլ միտումների գնահատմամբ
- Անորոշությունները գնահատվել են արտանետումների/կլանումների բոլոր ենթակատեգորիաների համար
- Վերահաշվարկվել են 1990-2017թթ. ժամանակային շարքերը՝ դրանց համադրելիությունն ապահովելու համար՝ հաշվի առնելով վերջին փոփոխությունները բարելավված մեթոդաբանության և գործունեության տվյալների ամբողջականության և ճշգրտության առումով:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ